Երկրորդ ընթերցում

Լրամշակված Նախագիծ

Կ-664-19.09.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 324-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «սնանկության գործի» բառերը փոխարինել «սնանկության վարույթի» բառերով,

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ սնանկության վարույթի ավարտն ընկած ժամանակահատվածում, կանխավճարներ չեն հաշվարկվում, դադարում է պարտապանի՝ հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար տույժերի եւ տուգանքների հաշվեգրումը: Ընդ որում, պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ սնանկության վարույթի ավարտն ընկած ժամանակահատվածում, մինչեւ վճռի ուժի մեջ մտնելը հաշվետու ժամանակաշրջաններին (ժամանակահատվածներին) վերաբերող ստուգումներով (կամ վերստուգումներով) կամ այլ եղանակով (այդ թվում՝ ճշտված հաշվարկներով)

այդ ժամանակաշրջանների (ժամանակահատվածների) համար լրացուցիչ առաջացած հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար տույժեր եւ տուգանքներ հաշվարկվում են մինչեւ վճռի օրինական ուժի մեջ մտնելու օրը:»,

3) լրացնել նոր 2.1-ին, 2.2-րդ, 2.3-րդ մասեր՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2.1. Սնանկության վտանգի դիմումը բավարարելու եւ ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ սնանկության վարույթի ավարտն ընկած ժամանակահատվածում կասեցվում է պարտապանի՝ մինչեւ վճռի կայացման օրվա դրությամբ առկա հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար տույժերի եւ տուգանքների հաշվեգրումը:

2.2. Սնանկության վտանգի դիմումը բավարարելու եւ ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռը կայացնելուց հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար տույժեր եւ տուգանքներ հաշվարկվում են Օրենսգրքով սահմանված կարգով: Ընդ որում, սնանկության վտանգի դիմումը բավարարելու եւ ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ սնանկության վարույթի ավարտն ընկած ժամանակահատվածում, մինչեւ վճռի ուժի մեջ մտնելը հաշվետու ժամանակաշրջաններին (ժամանակահատվածներին) վերաբերող ստուգումներով (կամ վերստուգումներով) կամ այլ եղանակով այդ ժամանակաշրջանների (ժամանակահատվածների) համար լրացուցիչ հայտնաբերված հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար տույժեր եւ տուգանքներ հաշվարկվում են մինչեւ վճռի օրինական ուժի մեջ մտնելու օրը, իսկ

վճռի ուժի մեջ մտնելու օրվանից հետո հաշվարկման ենթակա տույժերի եւ տուգանքների հաշվեգրումը կասեցվում է:

2.3. Սնանկության վտանգի դիմումը բավարարելու եւ ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հաշվետու ժամանակաշրջաններին (ժամանակահատվածներին) վերաբերող ստուգումներով (կամ վերստուգումներով) տույժերը եւ տուգանքները հաշվարկվում են Օրենսգրքով սահմանված կարգով: Ընդ որում, եթե սնանկության վարույթն ավարտվում է պարտապանի առողջացմամբ, ապա սույն հոդվածով սահմանված կարգով կասեցված տույժերը, տուգանքները համարվում են դադարած, իսկ եթե սնանկության վարույթն ավարտվում է առողջացման ծրագրի չկատարման հետեւանքով, ապա կասեցված տույժերը հաշվեգրվում են պարտապանի անձնական հաշվի քարտում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

~~Առաջին~~ Երկրորդ *ընթերցում*

Կ-664-19.09.2023-ՊԻ-011/1

Լրամշակված Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի ~~(այսուհետ՝ Օրենսգիրք)~~ 324-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «սնանկության գործի» բառերը փոխարինել «սնանկության վարույթի» բառերով,

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ սնանկության վարույթի ավարտն ընկած ժամանակահատվածում, կանխավճարներ չեն հաշվարկվում, դադարում է պարտապանի՝ հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար տույժերի եւ տուգանքների հաշվեգրումը: Ընդ որում, պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ սնանկության վարույթի ավարտն ընկած ժամանակահատվածում, մինչեւ վճռի ուժի մեջ մտնելը հաշվետու ժամանակաշրջաններին (ժամանակահատվածներին) վերաբերող ստուգումներով (կամ վերստուգումներով) կամ այլ եղանակով (այդ թվում՝ ճշտված հաշվարկներով) այդ ժամանակաշրջանների (ժամանակահատվածների) համար լրացուցիչ

առաջացած հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար տույժեր եւ տուգանքներ հաշվարկվում են մինչեւ վճռի օրինական ուժի մեջ մտնելու օրը:»,

3) լրացնել նոր 2.1-ին, 2.2-րդ, 2.3-րդ մասեր՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2.1. Սնանկության վտանգի դիմումը բավարարելու եւ ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ սնանկության վարույթի ավարտն ընկած ժամանակահատվածում կասեցվում է պարտապանի՝ մինչեւ վճռի կայացման օրվա դրությամբ առկա հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար տույժերի եւ տուգանքների հաշվեգրումը:

2.2. Սնանկության վտանգի դիմումը բավարարելու եւ ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռը կայացնելուց հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար տույժեր եւ տուգանքներ հաշվարկվում են Օրենսգրքով սահմանված կարգով: Ընդ որում, սնանկության վտանգի դիմումը բավարարելու եւ ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ սնանկության վարույթի ավարտն ընկած ժամանակահատվածում, մինչեւ վճռի ուժի մեջ մտնելը հաշվետու ժամանակաշրջաններին (ժամանակահատվածներին) վերաբերող ստուգումներով (կամ վերստուգումներով) կամ այլ եղանակով այդ ժամանակաշրջանների (ժամանակահատվածների) համար լրացուցիչ հայտնաբերված հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար տույժեր եւ տուգանքներ հաշվարկվում են մինչեւ վճռի օրինական ուժի մեջ մտնելու օրը, իսկ

վճռի ուժի մեջ մտնելու օրվանից հետո հաշվարկման ենթակա տույժերի եւ տուգանքների հաշվեգրումը կասեցվում է:

2.3. Սնանկության վտանգի դիմումը բավարարելու եւ ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հաշվետու ժամանակաշրջաններին (ժամանակահատվածներին) վերաբերող ստուգումներով (կամ վերստուգումներով) տույժերը եւ տուգանքները հաշվարկվում են Օրենսգրքով սահմանված կարգով: Ընդ որում, եթե սնանկության վարույթն ավարտվում է պարտապանի առողջացմամբ, ապա սույն հոդվածով~~կետով~~ սահմանված կարգով կասեցված տույժերը, տուգանքները համարվում են դադարած, իսկ եթե սնանկության վարույթն ավարտվում է առողջացման ծրագրի չկատարման հետեւանքով, ապա կասեցված տույժերը հաշվեգրվում են պարտապանի անձնական հաշվի քարտում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~2024~~ 2025 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Կ-664-19.09.2023-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» արտահայտությունը, քանզի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին (այսուհետ նաեւ՝ Օրենսգիրք) այլեւս հղում չի կատարվում:	Ընդունվել է	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետ**	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետով Օրենսգրքի 324-րդ հոդվածում լրացվող նոր՝ 2.2-րդ եւ 2.3-րդ մասերի համարներն առաջարկում ենք տեքստից բաժանել միջակետերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված կանոնը, այն է. «Հոդվածների եւ մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների	Ընդունվել է	Ընդունվել է:

			կետերի համարները՝ փակագծերով:»:		
3.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետ**	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետով Օրենսգրքի 324-րդ հոդվածում լրացվող նոր՝ 2.3-րդ մասի համաձայն. «2.3 Սնանկության վտանգի դիմումը բավարարելու եւ ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հաշվետու ժամանակաշրջաններին (ժամանակահատվածներին) վերաբերող ստուգումներով (կամ վերստուգումներով) տույժերը եւ տուգանքները հաշվարկվում են Օրենսգրքով սահմանված կարգով: Ընդ որում, եթե սնանկության վարույթն ավարտվում է պարտապանի առողջացմամբ, ապա սույն կետով սահմանված կարգով կասեցված տույժերը, տուգանքները համարվում են դադարած, իսկ եթե սնանկության վարույթն ավարտվում է առողջացման ծրագրի չկատարման հետեւանքով, ապա կասեցված տույժերը հաշվեգրվում են պարտապանի անձնական հաշվի քարտում:»: «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետով Օրենսգրքի 324-րդ հոդվածում լրացվող նոր՝ 2.3-րդ մասի 2-րդ նախադասությունում հղում է կատարվում «սույն կետով սահմանված կարգով կասեցմանը»: Քննարկվող դրույթը համարվում է ոչ թե հոդվածի կետ, այլ հոդվածի մաս՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված իրավադրույթի համաձայն, այն է՝ «3. Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն	Ընդունվել է Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետով Օրենսգրքի 324-րդ հոդվածում լրացվող նոր՝ 2.3-րդ մասի 2-րդ նախադասությունում «սույն կետով» բառերը փոխարինվել են «սույն հոդվածով» բառերով:	Ընդունվել է:

			համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:»: Բացի այդ, հարկ է նկատել, որ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետով Օրենսգրքի 324-րդ հոդվածում լրացվող նոր՝ 2.3-րդ մասում կասեցման կարգ նախատեսված չէ: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետով Օրենսգրքի 324-րդ հոդվածում լրացվող նոր՝ 2.3-րդ մասում կատարված հղումը:		
4.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվել է, որ նույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված գործողությունների իրականացման համար անհրաժեշտություն է առաջանում իրականացնել համապատասխան ծրագրային ապահովում, ուստի առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածը խմբագրել՝ «2024» թիվը փոխարինել «2025» թվով:	Ընդունվել է Նախագծի 2-րդ հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է: